

Անի Ժ. Ավետիսյան

ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆԻ ՕՍՄԱՆԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *

Բանալի բառեր – Մատենադարան, արաբատառ ձեռագրերի հավաքածու, օսմաներեն, օսմաներեն ձեռագրեր, ձեռագրի հարդարանք, հարդարանքային արվեստ, կազմ, լուսադրոշմ, գեղագրության նմուշներ, գրիչ, հիշատակարան:

Մուտք

Մատենադարանի արաբատառ ձեռագրերի հավաքածուն այսօր ընդգրկում է 2732 ձեռագիր, որոնցից մոտ 400-ը օսմաներեն են, այդ թվում՝ ութ չաղաթայերեն¹ և մեկ լակերեն² (զուգահեռ օսմաներեն):

Օսմաներեն ձեռագրերը Մատենադարանի ձեռագրական ժառանգության մաս են կազմել հիմնականում Սբ. Էջմիածնի Մատենադարանի հավաքածուի, Մինսկի Վ. Ի. Լենինի անվան գրադարանի (այժմ՝ Բելառուսի ազգային գրադարան), Մոսկվայի Լազարյան ձեռնարանի, Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի նմուշների համալրմամբ, նաև՝ շնորհիվ անհատական նվիրատվությունների:

* Սույն հոդվածի հիմքում ընկած է 2008 թ. սկսած՝ օսմաներեն ձեռագրերի մեր շարունակական նկարագրությունների և ձեռագրացուցակի պատրաստման ընթացքում արված ուսումնասիրություններից մի հատված: Հոդվածն ընդունվել է տպագրության 20.05.2024:

¹ **Չաղաթայերենը** համարվում է Արևելյան թուրքերենը (Doğu Türkçesi), որը 15-20-րդ դարերում, որպես գրավոր լեզու, տարածված է եղել Կենտրոնական Ասիայում:

² Լակերենը պատկանում է Կովկասյան լեզվաընտանիքին և համարվում է Դաղստանի պաշտոնական 14 լեզուներից մեկը:

ՎԷԸ համահայկական հանդես, ԺԶ (ԲԲ) տարի, թիվ 2 (86), ապրիլ-հունիս, 2024


Նվիրատուներից հիշատակելի են Հարություն Հազարյանի (Նյու Յորք), Գրիգոր Գևորգի Բարսեղյանի (Դամասկոս), Վարուժան Սալաթյանի (Դամասկոս), Հարություն Տեր-Ղազարյանի (Հալեպ), Միհրան Մինասյանի (Հալեպ), Հակոբ-Գրիգոր Ջրջրյանի (Փարիզ), Քերովբե և Սերովբե Պատկանյանների (Սանկտ Պետերբուրգ), Թորոս Ազատյանի (Ստամբուլ), Նոյեմի Պահրի Էլմասյանի (Ստամբուլ), հնագետ Սեդրակ Բարխուդարյանի (Երևան), լեզվաբան Հրայսա Աճառյանի (Երևան), բանաստեղծ Սողոմոն Տարոնցու (Երևան) անունները (նկ. 1)³:

Օսմաներեն ձեռագրերը ժՋ-ի դարերի են: Որպես գրչության վայրեր՝ հիշատակվում են Ստամբուլը (Կոստանդնուպոլիս), Անկարան, Բուրսան, Միլիթարեն, Մոսկվան, Էջմիածինը, Երևանը, Շուշին, Թավրիզը, Բաքուն և այլն:

Օսմաներեն ձեռագրերի հնագույն օրինակը ժՋ դարի մի ժողովածու է, որտեղ ընդգրկված են նույն ժամանակի նշանավոր գիտնական-հեղինակ Մևլանա Իմամ Շենսեդդին Ահմեդ իբն Սուլեյման իբն Քեմալի (նույն ինքը՝ Քեմալ Փաշազադեն) «Ռիսալե-ի Յաիյե Ֆի Լիսան ալ-Ֆարսի» պարսկերենի բառավերջի (Տ) - յե ձայնավորի կիրառման իմաստներին վերաբերող քերականական աշխատությունը և

Մարտեն Գարուն 2/2 է 24/ի 61 բաժնա-
դրեղձ Սողոմոն Տարոնցի 2
11/VI-60

دکتر آ. دَرغَازاریان
DR. A. DERGHAZARIAN



Նկ. 1

³ Նվիրատուների անունները հայտնի են դառնում Մատենադարանի Աստիպ ցուցակներում, ժամանակի ձեռագրատան ավանդապահների (Օսնիկ Եգանյան, Արտաշես Մաթևոսյան, Գևորգ Տեր-Վարդանյան) ամենամյա հաշվետու հոդվածներում եղած արձանագրություններից, նաև վերականգնվում, լրացվում և ամբողջանում են ձեռագրերի կազմաստառներին փակցված մատենանիշերից, գրադարանային նշում-թերթիկներից, նվիրատուների անձնական կնիքներից, երբեմն էլ նվիրատուների իրենց ձեռքով արված անվանական հիշատակումներից: Այդուհանդերձ, որոշների անուններ այդպես էլ կմնան անհայտ, քանի որ ժամանակին հետևողականորեն չեն արձանագրվել, կամ պարզապես նվիրատուներն անանուն մնալու ցանկություն են հայտնել:

Սուլթան Սուլեյման Ա-ի (1520–1566 թթ.)՝ մեծ վեզիր Իբրահիմ փաշային նվիրած իր հայտնի «Դեքայրք ուլ-Հաքայրք» («Ճշմարտությունների նրբությունները») պարսկերեն-օսմաներեն *երկրեզվյան* արձակ բառաբան-լեզվաբանական աշխատությունը⁴:

Ձեռագրերը բազմաբովանդակ են՝ գրականագիտական, մեկնողական (*շեքհ*), պատմագրական, քերականական, բժշկագիտական, կրոնական (իսլամական և քրիստոնեական), իսլամական իրավագիտական աշխատություններ (*ֆիկհ*, *քանուննամե*, *ֆերահիզ*), բնական գիտությունների առանձին ձյուղերին (աստղագիտություն, երկրաչափություն, քիմիա, ֆիզիկա) վերաբերող ուսումնասիրություններ, բառարաններ (չափածո, արձակ և ցանկային), նամականիներ, երազահաններ, հնայիլներ, կախարդանքի ու աստղագուշակության գրքեր, օրացույցներ և այլն:

Օսմաներեն ձեռագրերի մեջ մեծ թիվ են կազմում հատկապես գեղարվեստական և կրոնական ժառանգությանը վերաբերող՝ ընդամենը 272⁵ գրչագրերը:

Միայն գեղարվեստական գրականությանը վերաբերող գործերի գրչագրերը 120-ն են, մասնավորապես՝ ԺԶ-ԺԷ դարերի օսմանյան դասական գրականության՝ *Դիվանի* բանաստեղծներ Մահմուդ Աբդուլ Բաքիի, Վեյսիի (Ուվեյս իբն Մուհամմեդ), Օմեր Նեֆիի, Ֆահիմիի (Ունջի Զադե Մուսթաֆա Էֆենդի) «Դիվան»-ներն («Բանաստեղծությունների ժողովածու») են և միջնադարյան այլ խոշոր հեղինակների գրական գործեր:

Կրոնական ձեռագրերը թվով 152-ն են, որոնցում մեծ թիվ են կազմում Ղուրանի, նրա ընթերցման կանոններին առնչվող մեկնողական աշխատությունները (*թեֆսիր*), իսլամական աղոթքի (*նամազ*) կատարմանը նվիրված գործերը, աղոթագրքերը, ուխտագնացության կարգին, իսլամական կրոնով պահանջվող պարտավորություններին վերաբերող կրոնաբարոյախրատական չափածո և արձակ աշխատությունները, *հադիսներ* և այլն: Դրանց շարքում հիշատակման են արժանի՝ Յազըջը Օղլի Մեհմեդի հայտնի «Ռիսալեթ ուլ-Մուհամմեդիյե» իսլամի ավանդույթներին ու ուսմունքին նվիրված կրոնական *մես-*

⁴ Avetisyan A., “The Collection of Ottoman Turkish Manuscripts of the Matenadaran and the Description Methodology”, Yerevan, “Gututyun” Publishing House of the NAS RA, (pp. 252-263), pp. 255-256.

⁵ Թիվը պայմանական է, քանի որ ձեռագրերի ուսումնասիրությունն ընթացքի մեջ է:

նսի, Մուհամմեդ իբն Փիր Ալիի «Վեսիյեթ նամե-ի Բիրգիլի» կամ «Ռի-սալեթ-ի Բիրգիլի» անուններով հայտնի կրոնական աշխատության և նրա համար գրված մեկնողական աշխատությունների ձեռագիր օրինակները:

Ծավալով երրորդ ձեռագրախումբը բառարաններն են, որն ընդգրկում է 30 ձեռագիր: Դրանք երկլեզվյան (պարսկերեն-օսմաներեն, արաբերեն-օսմաներեն, չաղաթայերեն-օսմաներեն) և եռալեզվյան (արաբերեն-պարսկերեն-օսմաներեն) չափածո, արձակ և պարզ այբբենական, թեմատիկ, խառը (անկանոն) դասակարգմամբ բառարանների օրինակներ են: Բառարանների հիմնական մասը ԺԵ-ԺԹ դարերի հայտնի բանաստեղծ-բառարանագիրների՝ Ֆերիշթետոլու իբն Մելեքի, Մուղլալը Իբրահիմ Շահիդի Դեդեի, Սունբուլ Զադե Վեհբիի, Շեմսի Ահմեդ Փաշայի և այլ հեղինակների չափածո բառարանների ձեռագիր օրինակներն են, որոնք Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում՝ մինչև ԺԹ դարը, եղել են դասագրքեր արաբերենի, պարսկերենի ուսուցման համար⁶:

Պատմագրական բովանդակությամբ աշխատությունները սակավաթիվ են (թվով՝ 10), որոնք հիմնականում վերաբերում են Դադստանի և Օսմանյան կայսրության պատմությանը: Հիշատակման են արժանի ԺԸ դարի պատմագիր-տարեգիրների՝ Սամիի, Շուքրիի, Սուբհիի պատմության («Թարիհ-ի Սուբհի, Սամի վե Շաքիր») երկու հատորները, ինչպես և Դադստանի պատմության սկզբնաղբյուր համարվող «Դերբենդ նամե»-ի օրինակները, որոնց մեջ առանձնանում է երկլեզվյան՝ լակերեն, զուգահեռ օսմաներեն թարգմանությամբ ձեռագիրը: Այն աշխարհում հայտնի լակերենով պահպանված «Դերբենդ նամե»-ի եզակի բնագրի օրինակն է:

Բժշկագիտական ձեռագրերը թեև փոքրածավալ են (թվով՝ 15), սակայն արժեքավոր են իրենց ընդգրկած նյութի առումով: Ձեռագրերի հիմնական մասն ընդգրկում է ԺԵ-ԺԸ դարերի հայտնի բժշկապետների, բժշկագետների՝ Ջերրահ Իբրահիմ իբն Աբդուլլահի, Հեքիմ Նի-

⁶ Ավետիսյան Ա., Մատենադարանի պարսկերեն-թուրքերեն բառարանները, «Հայագիտական և իրանագիտական երկրորդ միջազգային գիտաժողով, Գիտական հոդվածների ժողովածու», Եր., Մատենադարան, 2011, էջ 148-169, **Avetisyan A.**, "MS № 1467 of Arabic Script Manuscripts Collection of the Matenadaran as a Newfound Example of the "Collection of Verse Dictionaries"", Bulletin of the Institute of Oriental Studies, vol. 2, num. 1, Yerevan, «Copy Print» Print. House, 2022, pp. 147-165 (in English):

դայի Չելեքիի, Շիրվանլը Շեմսեդդին-ի Իթաքիի, Դերվիշ Օմեր Էֆենդի ալ-Բրուսնիի, Հարփուօթի Էբու Բեքիր Նուսրեթ Էֆենդիի ընդհանուր բժշկությանը, բժշկության առանձին ճյուղերին վերաբերող աշխատություններ, բժշկարաններ, որոնք հիմնաքարային նշանակություն են ունեցել օսմանյան բժշկության ձևավորման և զարգացման գործում: Այս շարքում հատկապես կարևոր է ԺԷ դարի թուրք գիտնական, բժիշկ Շիրվանլը Շեմսեդդին-ի Իթաքիի՝ մարդակազմությանը նվիրված բժշկագիտական աշխատությունը (1632 թ.)՝ «Ռիսալե ալ-Թեշրիհիյե ալ-Իթաքի» խորագրով: Այն համարվում է օսմանյան շրջանի՝ անատոմիային վերաբերող առաջին նկարագարող գիտական աշխատությունը:

Այսպիսով, Մատենադարանի օսմաներեն ձեռագրական նմուշները ներառում են լավագույն ընդօրինակված ամբողջական բնագրային օրինակներ, որոնք գալիս են լրացնելու աշխարհում արդեն հայտնի օսմաներեն ձեռագրերի շարքերը, կամ որևէ գործի դեռևս անհայտ ձեռագիր օրինակներ են, կամ ինքնագրեր:

Օսմաներեն ձեռագրերի նախնական, հակիրճ, պարզ ցուցակի բնույթ կրող նկարագրություններն ընդգրկված են Մատենադարանի՝ 1940, 1948 թթ. կազմված Անտիպ ձեռագրացուցակներում ⁷:

2008 թ. սկսվել են օսմաներեն ձեռագրերի համակարգման, ընդարձակ նկարագրության և ձեռագրացուցակի պատրաստման աշխատանքները, իսկ հրնթացս գրվում և հրատարակվում են առանձին ձեռագիր գրքերի, թեմատիկ ձեռագրախմբերի վերաբերյալ հողվածներ, ուսումնասիրություններ, կարդացվում են գեկուցումներ տեղի և արտասահմանի գիտաժողովներում:

1. Ձեռագրերի ներքին և արտաքին հարդարանքը

ԺԵ դարի վերջը և ԺԶ դարի սկիզբն ընդունված է բնութագրել որպես Օսմանյան կայսրության «Ոսկե դարաշրջան»: Այս դարաշրջանի սկիզբը դրվում է Սուլթան Մեհմեդ Բ-ի՝ 1453 թ. բյուզանդական պատ-

⁷ Տե՛ս Ավետիսյան Ա., «Մատենադարանի օսմաներեն ձեռագրերի հավաքածուն (Նկարագրման մեթոդաբանությունը)», *Էջմիածին*, 2013, Ը, էջ 79-85, տե՛ս անգլերենը Avetisyan A., "The Collection of Ottoman Turkish Manuscripts of the Matenadaran and the Description Methodology", *The Countries and Peoples of the Near and Middle East*, (Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ), XXX, Yerevan, "GITUTYUN" Publishing House of the NAS RA, 2016, pp. 252-262:

մամշակութային հարուստ ավանդույթներ ունեցող Կոստանդնուպոլսի գրավումով և շարունակվում Սուլթան Սուլեյման Ա-ի իշխանության տարիներին (1520–1566 թթ.):

Օսմանցի թուրքը, յուրացնելով պարսկական և արաբական, բյուզանդական նվաճողական քաղաքականությամբ պայմանավորված՝ նաև այլ ժողովուրդների մշակութային ժառանգությունը, փորձում է ստեղծել իրենք՝ ծնունդ տալով այսպես կոչված օսմանյան գրակաությանը, մշակույթին և գիտությանը:

Այս շրջանում՝ որպես արվեստի ճյուղ, ծաղկում է նաև ձեռագրի զարդարումը: Ձեռագիրը դառնում է պալատական միջավայրի՝ սուլթանների, բարձրաստիճան անձանց գրադարանների բովանդակության անբաժանելի մասը, հարստության, շքեղության արտահայտչամիջոցը: Սկսվում է վարպետների, գրիչների, գրքի, կազմարարության, գեղարվեստական ձևավորման արվեստի հովանավորման բուռն ժամանակաշրջանը:

Ձեռագրի արտաքին տեսքն ապահովող նախկին անկազմ, կաշվե պարզ կազմերին փոխարինելու են գալիս կաշվե զարդարուն կազմերը, որոնց զարդարանքի մաս են դառնում դրոշմագարդերը, ոսկե և արծաթե կապիչները, իսկ թերթերի՝ ձակատագարդերը, լուսանցագարդերը, վերջնազարդերը, զարդարուն գլխագրերը, գրքի բովանդակությունը ներկայացնող մանրանկարները: Որպես ձեռագրի զարդարանքի բաղադրիչ մաս՝ առանձնանում է նաև գիրը, որն էլ, իր հերթին, բերում է գեղագրության զարգացմանը⁸, և, արդեն ԺԸ դարում, կայսրության տարածքում հաշվվում է գեղագրության տեսակներին վերաբերող մոտ քսան դպրոց⁹:

Այդ ամենը՝ գեղարվեստական մոտեցմամբ կազմը, գեղագրության նմուշ հանդիսացող գիրը, նրբաձաշակ մանրանկարչությունը

⁸ Օսմանյան ձեռագրարվեստում, որպես առաջին վարպետ-գեղագիրներ, հիշատակվում են Շեյխ Համդալլահը (1429–1520 թթ.) և Հաֆրզ Օսմանը (1642–1698 թթ.), որոնք պատրաստել են գեղագիրների մի ամբողջ սերունդ: Այդ սերնդից են Շեյխ Համդալլահի աշակերտ Սուլթան Բայազետ Բ-ն (1481/82–1512/13 թթ.), Հաֆրզ Օսմանի աշակերտ Սուլթան Ահմեդ Գ-ն (1703/04–1730/31 թթ.): Տե՛ս Рукописная и ксилографическая книга востока: Очерки кодикологии, (ред. **Пелевин М. С.**), Санкт-Петербург, 2015, (с. 104–120), с. 109 (ebook):

⁹ **Гарбузова В. С.**, *Поэты средневековой Турции*, Ленинград, 1963, с. 111.

գալիս են ապահովելու ձեռագրերի ներդաշնակությունը բովանդակության հետ:

Ցանկացած ձեռագրական հավաքածու գնահատելիս, որպես կանոն, արժևորվում է ոչ միայն նրա բովանդակությունը, այլ նաև՝ հարդարանքը:

Թեև Մատենադարանի օսմաներեն ձեռագրերի հարդարանքը զիջում է պարսկերեն և արաբերեն ձեռագրերի հարդարանքին, այնուամենայնիվ, այն ևս հետաքրքրական է և ուսումնասիրման արժանի:

Մատենադարանի օսմաներեն ձեռագրերը գրվել կամ ընդօրինակվել են հիմնականում արևմտյան-եվրոպական թղթի վրա, որին բնորոշ են կանոնավոր լուսագծերը (անգլ.՝ *laid paper with chain and laid lines*), լուսադրոշմները (անգլ.՝ *watermark*)¹⁰, երբեմն նաև՝ *միսթարայի* (*mistara*, հայ.՝ ճնշագիծ, անգլ.՝ *lineation*) առկայությամբ:

Գերիշխում է իտալական թուղթը. սա պատահական չէ, քանի որ, ԺԶ դարից սկսած, օսմանյան ձեռագրերի մոտ 50 տոկոսը գրվել է Ֆարրիանո, Վենետիկ, Բոլոնյա քաղաքներում արտադրված իտալական թղթի վրա¹¹:

Իտալական թղթի գործածության վկայություններն են անվանատառային լուսադրոշմները (անգլ.՝ *countermark*), որոնք, ըստ էության, թուղթը պատրաստողների կամ թղթի արտադրությամբ զբաղվողների անունների սկզբնատառերն են: Նրանց մեջ են ԺԶ-ԺԹ դարերում հայտնի արտադրողների՝ իտալացի Գալվանի (մյուսը՝ Անդրեոլի) ընտանիքին պատկանողները՝ «Ֆրատելլի Գալվանի» ("FG"-Fratelli Galvani), «Անդրեա Գալվանի» ("AG"-Andrea Galvani), «Վալենտինո Գալվանի» ("VG"-Valentino Galvani), նաև ոչ պակաս հայտնի արտադրողների՝ «Վոլկով և Անդրեև» ("VA"-Volkov and Andreev), «Ֆրատելլի Բոզոնի» ("FB"-Fratelli Bozoni), «Անդրեա Մաֆիձոլի» ("AM"-Andrea Mafizzoli), «Ջովաննի Բուտի» ("GB"-Giovanni Buti), «Մասսո» ("MASSO")¹² և այլոց

¹⁰ Ամենավաղ եվրոպական լուսադրոշմով թղթի օրինակը թվագրվում է ԺԳ դար՝ 1293 թ. (Ֆարրիանո, Իտալիա): Եվրոպական լուսադրոշմներով թուղթը իսլամական աշխարհում (Արաբական երկրներ, Մադրիբ) հայտնվել է ԺԴ դարի կեսերին, իսկ Օսմանյան կայսրությունում՝ արդեն ԺԶ դարի սկզբներին: Տե՛ս **Gacek A.**, *Arabic Manuscripts. A Vademecum for Readers*, Leiden. Brill, Boston, 2009, p. 291:

¹¹ **Gacek A.**, *Arabic Manuscripts...*, pp. 290-292.

¹² Լուսադրոշմի այլ տարբերակներ են MASSO LEGRAN, LEGRAN MASSO, GRAN MASSO, AL MASSO:

լուսադրոշմները (օրինակ՝ ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 55, 137, 939, 1041, 1166, 1456):

«Եռամահիկ»-ի (իս.՝ *tre lune trois croissants*, անգլ.՝ *three crescents*) պատկերով լուսադրոշմ ունեցող թղթի կիրառությունը բավական հաճախ է հանդիպում ձեռագրերում (օրինակ՝ ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 313, 1439, 2059): Այս թղթի պատրաստման վայրն է Վենետիկը, և այն հայտնի է «Վենետիկյան թուղթ» (անգլ.՝ *Venetian paper*) անունով: Թուղթն արտադրվել է ԺԷ դարի երկրորդ կեսերին, արևելյան՝ մասնավորապես օսմանյան շուկա արտահանելու նպատակով¹³:

Այս ժամանակաշրջանին բնորոշ մյուս տարածված՝ «թագ, աստղ, մահիկ» (անգլ.՝ *crown-star-crescent*), «վահան՝ մեջտեղում մարդադեմ մահիկ» (անգլ.՝ *man-in-the-moon-in-shield* կամ *moon face in shield*) պատկերող լուսադրոշմներով եվրոպական թղթի օրինակների ևս հանդիպում ենք օսմաներեն ձեռագրերի շարքում (օրինակ՝ ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 2334):

Միայն եզակի ձեռագրերում են նկատվում արևելյան (անկանոն լուսագծերով կամ դրանց բացակայությամբ) կամ եվրոպական՝ մանրաթելերով (երբեմն հորինված, արհեստական լուսադրոշմներով) թղթեր, որոնք պատկանում են ԺԹ-Ի դարերին (օրինակ՝ ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 465)¹⁴:

ԺԹ-Ի դարերի թվագրությամբ ձեռագրերը գրվել են նաև ռուսական գործարանային արտադրության թղթերի վրա: Այն վերաբերում է մասնավորապես Երևանում, Էջմիածնում և Շուշիում գրվածներին:

Իրանց փաստագրումներն են թղթերի վրայի արտաքին լուսանցքների վերին և ստորին հատվածների գործարանային ճնշադրոշմները, որոնցից են՝ Ուզլիչի «К. Угличской № 6 Фабрики» (ութանկյուն, արտադրվել է 1884, 1902-1904 թթ.) (ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 230), Կոնդրովի Կոզլովի անվան «Конд. [Кондровская] фабр. [фабрика] № 6 [герб Козловых] Козловой» (քառանկյուն զարդանախշ, արտադրվել է 1860, 1874 թթ.) և Պենզայի Սերգենի անվան «Фабрики № 6 Сергѣева» (քառանկյուն կտրված անկյուններով, արտադրվել է 1862, 1866-1876 թթ.) (ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 110, 334, 462), Արիստարխովի անվան

¹³ Déroche Fr., Berthier An. և ուրիշներ, *Islamic Codicology* (An Introduction to the Study of Manuscripts in Arabic Script), Al-Furqan Islamic Heritage Foundation, London, 2005, pp. 57-58.

¹⁴ Թղթի մասին տե՛ս Gacek A., *Arabic Manuscripts...*, p. 292:

«ФАБРИКИ VI-6 АРИСТАРХОВА» (ուղղանկյուն, արտադրվել է 1850, 1854, 1857 թթ.) (ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 252), նաև Սմոլենսկի "Воскресенская бумажная Фабрика АН" (ձվածիր, արտադրվել է 1830-ականներին) (ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 465), Մոսկվայի Կուվշինով ընկերության «ТОВАРИЩЕСТВО КУВШИНОВА, № 4» (ձվածիր, պատկերը՝ վրայի առյուծի պոչը բարձրացված, արտադրվել է 1893, 1902, 1908 թթ.) (ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 228), Ռոստովի Պանչենկոյի անվան «Панченко № 6 Ростовъ» կամ «Ростов, Панченко» (քառանկյուն կտրված անկյուն-



Նկ. 2

ներով, արտադրվել է 1905, 1912 թթ.)¹⁵ (ՄՄ Արք. Ձեռ. 334) թղթի գործարանների ճնշադրոշմները (նկ. 2)¹⁶:

Ձեռագրերի շարքում կան նաև արևմտյան թղթի գործարանային ճնշադրոշմների եզակի օրինակներ՝ «ВИАМЕНС.ФАВР.» (ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 312), «ВАТН, թագ» (քառանկյուն, արտադրվել է 1844-1846 թթ., ձվածիր, արտադրվել է 1856, 1862 թթ., ուղղանկյուն զարդանախշ, արտադրվել է 1856 թ.) (ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 394)¹⁷:

¹⁵ Այս արտադրության թղթի ճնշադրոշմի այլ տարբերակ տե՛ս Կ. Կ. ПАНЧЕНКО/ВЪ РОСТОВЕ н/д:


¹⁶ Клепиков С. А.. Штемпели (таблица), А) Штемпели на бумаге русского производства, <http://opentextnn.ru/old/history/arkheography/specification/index.html?id=2985>, (մուտք՝ 18.06.2021).

¹⁷ Клепиков С. А.. Штемпели (таблица), Б) Наиболее часто встречающиеся в русских архивах штемпели на бумаге иностранного производства, <http://opentextnn.ru/old/history/arkheography/specification/index.html?id=2985>, (մուտք՝ 18.06.2021).

Ներկայումս Մատենադարանի օսմաներեն ձեռագրերի մեջ դեռևս հայտնի եզակի օրինակ է արևմտյան՝ սպիտակ և գունավոր (կանաչ, մանուշակագույն, վարդագույն, բաց շագանակագույն) ոսկեցան թղթի վրա (անգլ.՝ *gold-speckling paper* կամ *gold-sprinkled paper*) գրված ձեռագիրը (ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 1148)¹⁸, իսկ մագա-



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5

ղաթյա նմուշներ են՝ ԺԸ-ԺԹ դարերի գրչագիր ժապավիհնաձև «Դարենդևի»¹⁹ օրացույցներից երկուսը (ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 412, 1803) (նկ.3):

Բացի վերոհիշատակված թղթերից, հայտնի է, որ օսմանյան ձեռագրերի կազմման համար օգտագործվել են նաև հնդկական, սամարղանդական և սպահանյան թղթերը²⁰, սակայն նման օրինակների մեր ձեռագրերի շարքում դեռևս չենք հանդիպել:

Օսմաներեն ձեռագրերի կազմերը հիմնականում հաստ ստվարաթղթե միջուկով պարզ կամ դրոշմազարդ կաշվից են²¹, գունավոր մոմլաթից (շագանակագույն, բորդո, կարմիր, կանաչ, սև և այլն), մար-

¹⁸ Ոսկեցան թուղթը հայտնվել է ԺԵ դարում՝ Իրանում (պարս.՝ *zar afshan*), իսկ ԺԶ դարում արդեն օգտագործել են Օսմանյան կայսրությունում: Այս տեխնիկան հայտնի է եղել հատկապես Խորասանի վարպետների շնորհիվ ԺԶ դարում և լայնորեն գործածվել է Սեֆյան շրջանի արժեքավոր ձեռագրերում: Տե՛ս **Gacek A.**, *Arabic Manuscripts ...*, pp. 89-90:


¹⁹ Օրացույցի՝ «Դարենդևի» անվանումը, պայմանավորված է կազմողի՝ Մեհմեդ իբն Իսմայիլի (ԺԷ-ԺԸ դդ.), Դարենդևից (քաղաք Սեբաստիայի նահանգում) լինելու հանգամանքով: Այն նախատեսված է եղել երկարատև օգտագործման համար:

²⁰ *Рукописная и ксилографическая книга востока: Очерки кодикологии*, с. 107 (ebook).

²¹ Կազմարարության մեջ հիմնականում կիրառվել են այծի և ոչխարի կաշիները: Տե՛ս **Gacek A.**, *Arabic Manuscripts ...*, p. 141:

մարանման (անգլ.՝ *marbled paper*, թրք.՝ *ebru*)²² և ծաղկային մոտիվներով ստվարաթղթից (անգլ.՝ *flower designed paper*) (նկ. 4):

Կազմերի մեջ քիչ չեն օսմանյան կազմարարությանը բնորոշ կենտրոնում ծաղկային, երբեմն էլ ծաղկային ոսկեկիցք դրոշմազարդով (այսինքն՝ *մանդորլայով* (*mandorla, lawzah, turanj, shemse*))²³ կամ դրոշմազարդ՝ կախազարդերով (անգլ.՝ *mandorla with pendants*) օրինակները (նկ. 5):



Նկ. 6

Նշենք, որ միայն որոշ ձեռագրերի դրոշմազարդերում են պահպանվել ոսկեգօծման²⁴ մնացորդները (օրինակ՝ ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 323): Կան նաև դրվազազարդ, դրոշմաեզրագծերով (ոսկով լցված), դրոշմազարդ դռնակով կաշվից կամ մուկաթից կազմեր (օրինակ՝

ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 302, 577, 640, 1166, 1284) (նկ. 6):

Օսմանյան տիպական կազմարարության արվեստին բնորոշ օրինակների ևս հանդիպում ենք ձեռագրերում: Այդ տեխնիկան առանձնանում է կաշվի կիրառման խնայողությամբ: Կաշին փակցվել է միայն կազմի եզրային և մեջքի հատվածներին, իսկ հիմնական մակերեսին՝ զանազան թղթեր (օրինակ՝ ծաղկաթուղթ, գունազարդ, գունավոր թուղթ (անգլ.՝ *tinted (coloured) paper*))²⁵ կամ գործվածք (լաթ, թավիշ):

²² Այս թուղթը սկզբնական շրջանում գործածվել է Իրանում (պրս.՝ *kāghaz-i abrī*, թրգմ.՝ ամպանման թուղթ), ապա ԺԷ դարից՝ նաև Օսմանյան կայսրությունում, հատկապես ձեռագրերի կազմերի, կազմաստառների զարդարման համար: Տե՛ս Gacek A., *Arabic Manuscripts ...*, p. 30:

²³ Նշաձև դրոշմազարդ (անգլ.՝ *almond-shaped ornament/medallion*): Զարդը սելջուկյան և վաղ օսմանյան շրջանում ունեցել է բոլորշու ձև, իսկ ԺԷ դարից՝ ձվածիր:

²⁴ Ըստ ոսկեգօծման եղանակների՝ առանձնանում է դրոշմազարդի երեք տեսակ. Ա. ոսկեգօծ հիմքով նախշերով (թրք.՝ *altan ayırma şemse*, թրգմ.՝ ներքևից առանձնացած արև), Բ. ոսկեգօծ ցայտուն մասնիկներով (թրք.՝ *üstten ayırma şemse*, թրգմ.՝ վերևից առանձնացած արև), Գ. ամբողջական ոսկեգօծ նախշերով (թրք.՝ *mülemma şemse*, թրգմ.՝ փայլուն արև): Տե՛ս Ручкописная и ксилографическая книга востока: Очерки кодикологии, с. 112 (ebook):

²⁵ Գունավոր թուղթ ստացել են ներկման տեխնիկայի կիրառությամբ, որի դեպքում միջոց են ծառայել տարբեր բույսերից (օրինակ՝ թեյ, ընկույզի կանաչ կեղև, նոսն կեղև ևն) ստացած հեղուկները: Թեյից ստացվել է բաց դեղնավունը, ընկույզի կանաչ կամ

Ձեռագրագիտության մեջ այս կազմերը հայտնի են «չահարքուշե ջիլդ» (թրք.՝ *çaharkuşe cild*) անունով, որը նշանակում է «չորս անկյուն» («քառանկյուն») կամ «չորս կողմ» («քառակող») (օրինակ՝ ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 245, 299, 646, 1038) (նկ. 7):



Կազմերի մեջ կան նաև հաստ ստվարաթղթի կամ տախտակի վրա փակցված գունավոր գործվածքով նմուշներ (օրինակ՝ ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 223, 346), որոնք գործածական են եղել ուշ շրջանի կազմարարության մեջ:



Նկ. 7

Նորոգելիս՝ կազմերը հաճախ փոխարինվել են ԺԹ-Ի դարերի կազմարարության մեջ գործածվող նմուշներով՝ հաստ ստվարաթղթե միջուկ ունեցող փայլուն գունավոր մոմլաթե կազմերով, որոնք երբեմն ունեն նաև անկյունային դրվագազարդեր, դրոշմաներագծեր (օրինակ՝ ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 137, 228, 362):

Վերակազմված ձեռագրերի շարքում հին կազմերը պահպանվել են նաև որպես պահպանակներ, ինչպես, օրինակ՝ ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 312 (նկ. 8):



Նկ. 8

Նոսան կեղևներից՝ շագանակագույնը, չիլխանի սերմերից՝ դեղինը ևն: Տե՛ս **Derman M. Uğur**, *Osmanlı Hat Sanatı (Sakıp Sabancı Müzesi, Sabancı Üniversitesi, İstanbul)*, Deutsche Guggenheim, Berlin, 2001, s. 11 (ebook):

Ձեռագրերի պահպանակները մեծ մասամբ կազմաստառի մասն են՝ սպիտակ, գունավոր (դեղին, վարդագույն, դեղնականաչ, կապտականաչ և այլն), ծաղկային և մարմարանման թղթեր են (օրինակ՝ **ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 223, 299, 1221, 1749**):

Բնագրերի ընդօրինակությունների համար գործածվել է հիմնականում սև²⁶ թանաք, քիչ դեպքերում՝ ոսկեցան սև թանաք, այն էլ՝ հատվածաբար (օրինակ՝ **ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 324, էջ 1ա, 40ա**): Խորագրային և ենթախորագրային մասերն ընդգծվել են կարմիր, հազվադեպ՝ մանուշակագույն, կանաչ, կապույտ թանաքներով, ոսկով: Խորագրային հատվածները առնվել են նաև ոսկե զարդարուն վերնագրային հատվածների (թրք.՝ *ünvan*) մեջ:

Օսմաներեն ձեռագրերում գեղագրության վեց նմուշներից (թրք.՝ *aklâm-ı sitte*)²⁷ առավել չափով օգտագործված են մանր և խոշոր *ռիկան* (թրք.՝ *rika*)²⁸, *նասիլը* (թրք.՝ *nesih*)²⁹ և *նասթալիքը* (թրք.՝ *nestalik*)³⁰: Մրանք ձեռագրերում երբեմն գործածվում են միախառնմամբ:

²⁶ Իսլամական աշխարհում սովորաբար գործածվել է սև թանաքի երկու տեսակ՝ կարբոնային հիմքով (*midad*), թանիսի և մետաղական աղի միացությամբ (*hibr*), երբեմն նաև տեսակների համադրությամբ: Տե՛ս **Déroche Fr., Berthier An.** և ուրիշներ, *Islamic Codicology...*, p. 112: Օսմանյան շրջանում սև թանաք են ստացել հատկապես կտավատի յուղի մրից, որը երկարատև պահել է իր պայծառությունն ու թարմությունը, նաև նավթից, սոճու և այծի բրդի մրերից: Տե՛ս Руккописная и ксилографическая книга востока: Очерки кодикологии, с. 105 (ebook):

²⁷ Դրանք են՝ սուլուս (թրք.՝ *sülüis*), մուհաքքաք (թրք.՝ *muhakkak*), ռեյհանի (թրք.՝ *reyhani*), թևքի (թրք.՝ *tevki*), նասիս (թրք.՝ *nesih*), ռիկա (թրք.՝ *rika*):

²⁸ *Ռիկան* ձևավորվել է *դիվանի* (թրք.՝ *divani*) գրի հիմքի վրա ժԸ դարի երկրորդ կեսերին: Այն գործածվել է պաշտոնական, առօրյա գրագրության մեջ, փոքրածավալ աշխատություններում, բայց ոչ երբեք՝ կրոնական բնագրերում: Օսմանցիների մոտ *ռիկան* հայտնի է եղել որպես «արտոնագրի» գիր (թրք.՝ *hatt-ı icaze*), քանի որ գեղագիր-վարպետը հատկապես այս գրով է պատրաստել իր աշակերտների արտոնագրերը: Տե՛ս Руккописная и ксилографическая книга востока: Очерки кодикологии, с. 108 (ebook):


²⁹ *Նասիլը* ծագել է Ժ դարի վերջ-ԺԿ դարի սկիզբ, առավել կանոնավոր գործածվել է ԺԳ դարից սկսած: Այն ամենատարածված, դպրոցներում ուսուցանվող գիրն է: Կիրառվել է փոքր և միջին չափի Ղուրանի, Հադիսի և այլ բնագրերի ընդօրինակություններում:

³⁰ *Նասթալիքը*՝ որպես գրի տեսակ, ձևավորվել է *նասիլի* հիմքի վրա: Մշակվել է ԺԴ դարում՝ Իրանում (Թավրիզ և Շիրազ) և կատարելագործվել՝ ԺԶ դարում: Գրի ստեղծող է հիշատակվում Միր Ալի Թաբրիզի: Համարվում է պոեզիայի գիր, բայց ոչ երբեք՝ *Ղուրանի* (ձեռագրագիտության մեջ հազվադեպ հիշատակվում են նաև *Ղուրանի* ընդօրինակություններ): Գիրը բնորոշ է պարսկերենին, սակայն Օսմանյան կայսրությունում (ԺԵ դարի երկրորդ կեսից) նույնպես ունեցել է իր կիրառությունը՝



Նկ. 9

Ձեռագրերի գեղարվեստական հարդարանքը, գեղագիտական ակնահաճո տեսքն ապահովել են մասնավորապես ծաղկային մոտիվներով ձևկատագարողերը (թրք.՝ *serlevha*) (օրինակ՝ ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 59, 321, 325, 633, 983, 166, 1166, 1283, 1803) (նկ. 9) և թեմատիկ մանրանկարչության նմուշները (օրինակ՝ ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 1749) (նկ. 10):



Նկ. 10

հատկապես գրական գործերի ընդօրինակություններում և ստացել է *թալիք* (թրք.՝ *talik*) անվանումը:




Նկ. 11

Ոսկի շրջանաձև, լուսին պատկերող մեդալիոնի (անգլ.՝ *circular medallion*) միակ օրինակը ձեռագրաշարքում՝ արդեն իսկ իր գեղագիտական հարդարանքով առանձնացող «Դարենդենի» ժապավինաձև օրացույցի՝ 633 համարի ներքո պահվող օրինակն է, որտեղ հիշատակված է նաև գրչի անունը³¹ (նկ. 11):

Գրադաշտերի հարդարանքում գերիշխում են զարդարման պարզագույն միջոցները: Գրադաշտերն առնվել են պարզ և բաղադրյալ կարմիր, երբեմն՝ կապույտ, կանաչ կամ ոսկով և բրոնզով լցված շրջանակների մեջ:

Այս մանրակրկիտ և նուրբ աշխատանքը վստահվել է գործի վարպետներին, որոնք հայտնի են եղել *քալեմքեշ* (թրք.՝ *kalemkes*) կամ *ջեթվեյլեշ*

(թրք.՝ *çetvelkes*) անուններով³²:



Նկ. 12

Կրոնական բովանդակությամբ աշխատություններում նկատելի է նախադասությունների ոսկի կամ բրոնզ եռակետերով, ոսկով լցված ամպազարդերով (անգլ.՝ *cloudbands*) միմյանցից առանձնացնելու զարդարանքի սովորույթը (օրինակ՝ ՄՄ Արք. Ձեռ. Հ^մ 1281) (նկ. 12), իսկ գեղարվեստական և այլ բովանդակությամբ գործերում՝ արդեն կարմիր թանաքով լցված կետեր կամ եռակետերը (օրինակ՝ ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 245, 741):

Հիշատակարանները (անգլ.՝ *colophon*, թրք.՝ *hatime, ferağ kaydı,*

ketebe kaydı) ոչ միշտ են առանձնացել բուն բնագրից, իսկ եթե անգամ

³¹ Գրիչն է Սուլեյման Հիբմեթին, գրչության թվականը՝ Հջր. 1217/1802 թ., գրչության վայրը՝ [Ստամբուլ]:

³² *Рукописная и ксилографическая книга востока: Очерки кодикологии*, с. 107 (ebook).

առանձնացել են, ապա չի եղել հստակ կանոն. կարող էին ունենալ տարբեր ձևեր և չափեր, առնվել ուղղանկյունների և շրջանակների մեջ:

Միայն ԺԶ դարից սկսած՝ հիշատակարանները գրվել են շրջուն եռանկյան նման կամ առնվել են շրջուն եռանկյան մեջ՝ դառնալով իսլամական ձեռագրերում հիշատակարանային հատվածների ընդգծման բնորոշ ձև:



Նկ. 13

Օսմաներեն ձեռագրերում հիշատակարանները բուն բնագրերից առանձնացնելու նպատակով՝ գրիչները դրանց տվել են զարդարուն տեսք՝ առնելով կարմիր, սև՝ պարզ, բաղադրյալ, նաև ոսկով լցված կամ կարմիր թանաքով եզրագծված շրջուն եռանկյունների մեջ, որն իսլամական ձեռագրերում հիշատակարանային հատվածների ընդգծման բնորոշ ձև է (օրինակ՝ ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 55, էջ 95ա) (նկ. 13):

Երբեմն էլ հիշատակարանային տողերն ընդգծվել են միայն կարմիր թանաքով (օրինակ՝ ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 298, էջ 25ա), կամ պարզապես պահպանվել է հիշատակարանի շրջուն եռանկյունաձև գրությունն առանց որևէ ընդգծումների (օրինակ՝ ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 196), կամ գրիչներն ու ծաղկողները յուրովի են գրել հիշատակարանները, նաև առանձնացրել ու զարդարել դրանք (օրինակ՝ ՄՄ Արք. ձեռ. Հ^մ 230, 1166, 1281, 2211) (նկ. 14):

کتابه عبد القیصر و القیصر الله تعالى عبد الله ابن الحاج خلیل
 خادم الفرائض کسب المهرین
 المؤید بمجامع والده کمال
 من باب بیعی عن
 اسلامبول
 ۱۱۲۰
 ۱۱۲۰

حلت اعلان اولی عمری بتموم زبیرا در بزرگداشت تانیت سبل قبل و در
 اورزرت اولی در بزرگداشت بعد الشریح انعام بهنا عبد القیصر الحقیق
 حادرم عبید البی قریبین عبد الله ابن
 الی حاجی خلیل مؤید من جامع کریف
 والی سلطان شیخ بهایبول
 باب بیعه ۱۱۲۰

قدوم حاکم الدین علی بیجان اولی
 والولایة والسمع والیه سنة
 ثمانین وثلث و الف
 ۱۰۳۳

نمت الرسالة بعون الله الملك الوهاب
 وفي يومنا العشر الذي تقاضى طارده كرامة الله
 من بطنه والى السعادة وفي سنة ثمانين وثلاث مائة
 اربعين وفي ليلة القدر في سنة ثمانين وثلاث مائة
 وفي سنة ۱۱۲۶

کتابه علی الخلیل بن خلیل کاتبه دیوانه حاجی مؤید
 و غیر خلیفہ مکلف من قبله علی الماروق باقر
 شیخ الیوم من ذمیرة مجلس اولی
 و غیر ذمیرة مجلس اولی
 علی بن خلیل مؤید
 الله و ۱۱۲۰



2. Հիշատակարանները՝ ձեռագրաստեղծման և գործածականության վկաներ

Բնագրերին ձեռագրագիտական գնահատական տալու համար նկատի է առնվում նաև ձեռագրի ամբողջականությունը, որը հնարավորություն է տալիս ուրվագծել ձեռագրի կազմման պատմության հստակ պատկերը:

Դրա ապահովման գործիքներից կարևորագույնը **գրչության ժամանակի հիշարակարանի** առկայությունն է ձեռագրում, որն, ըստ էության, կարևոր միակ փաստագրությունն է, որտեղ ամփոփվում է ձեռագրի ստեղծման հանգամանքների պարզաբանման բանալին: Այն պատասխանում է ուսումնասիրողին մշտապես հետաքրքրող որտե՞ղ (գրչության վայրը), ե՞րբ (գրչության թվականը) և ո՞վ (գրչի անունը) հարցադրումներին:

Առանձին դեպքերում հիշատակարանն իր բովանդակած տեղեկությունների շնորհիվ ձեռագրին կարող է հաղորդել բացառիկ կարևորություն, անգամ շեշտել եզակիությունը (օրինակ՝ **ՄՄ Արք. Ձեռ. Հմր 228, էջ 6ա, 230, 42ա, 462, էջ 19բ-20ա**):

Մատենադարանի ուսումնասիրվող օսմաներեն ձեռագրերի հիշատակարաններում բերված վկայություններից բացահայտվում է ձեռագրի վարպետ գրչի կամ նրա աշակերտի, երբեմն նաև անփորձ գրչի, կամ թե հորից որդուն փոխանցվող արհեստի նմուշ, ինչպես նաև գրիչների մասնագիտական, հոգևոր, կրթյալ դասի ներկայացուցիչներ լինելու հանգամանքները՝ *քաղի, մուֆթի, մոլլա, մյուդերիս* ևն: Երբեմն էլ ընդգծվում է ձեռագրի որևէ հաստատությանը նվիրաբերված (*վաքրֆ*) կամ պարզապես որևէ աղբյուրի պահպանման համար գրված լինելը: Քիչ չեն նաև ընթերցողներին ուղղված հիշատակագիրների հորդոր-խնդրանքները՝ գիրը (իմա՝ ձեռագիրը) պահպանելու, սերնդեսերունդ փոխանցելու, ընթերցելու, նաև՝ օգուտ քաղելու օրհնության աղերսը (օրինակ՝ **ՄՄ Արք. ձեռ. Հ^{մր} 55, էջ 96ա, 298, էջ 25բ, 70բ, 325, էջ 24բ, 937, էջ 47բ, 1096, էջ 10բ**):

Հաջորդը **նախագաղափար օրինակի հիշատակարանն** է, որն, ըստ էության, գրչի համար գաղափար-օրինակ ծառայած մատյանի հիշատակարանն է կամ երկի հեղինակի, որտեղ և ամփոփվում են ինչպես ամբողջական ձեռագրի, այնպես էլ՝ ձեռագրում ընդգրկված



բնագրերի հեղինակների անունները, գրության հանգամանքները՝ սկսելու և ավարտին հասցնելու տարեթիվը, ամիսը, օրը, անգամ գրելու տևողության արձանագրումը՝ ամիսների կամ տարիների թվի, վայրի, պատվիրատուի կամ պատվիրատուների անունների հիշատակմամբ (օրինակ՝ **ՄՄ Արք. ձեռ. Հ^ա 323, էջ 96ա, 985, էջ 73բ, 1234, էջ 72բ**):

Ի վերջո, **հետագայի հիշատակարանները** գալիս են բացահայտելու ձեռագրի՝ որպես գոյություն ունեցող առարկայական երևույթի կենսագրական մանրամասները՝ մեծ մասամբ տերերի և ստացողների անուններ, ընթերցասեր հասարակության, կրթյալ դասի ներկայացուցիչների շրջանում ձեռագրի գործածականության վկաներ (օրինակ՝ ընթերցողների հիշատակարաններում հաճախ նշվում է, թե ո՞վ է փոխանցել գիրքը, ե՞րբ է սկսել այն ընթերցել կամ ե՞րբ է ավարտել, ու՞մ հետ և որտե՞ղ է ընթերցել և այլն), առքուվաճառքի (երբեմն հիշատակելով գումարի չափը), ժառանգության փաստագրման վկայություններ, որոնք, որպես արժեքավոր իրեր, փոխանցվել են սերունդներին՝ դառնալով ընտանիքի թալիսմաններ, ընտանիքի անդամների կյանքի կարևոր՝ տխուր և ուրախ, մահվան և ծննդյան օրերի արձանագրումների նոթատետրեր (օրինակ՝ **ՄՄ Արք. ձեռ. Հ^ա 196, կազմաստառ Ա, պիպ. Բար, 324, կազմաստառ Բ, 346, էջ 1ա, 646, էջ 34ա, 1234, էջ 73ա**):

Եթե որևէ ձեռագրի գործածականությունը, պատկանելությունը հիշատակարաններով չեն արձանագրվել, ապա խոսում ապացույցներ են դարձել ձեռագրի թերթերի տարբեր հատվածներում, պահպանակների վրա եղած՝ տերերի անձնական կնքադրոշմները (անգլ.՝ previous owners' statements or seal impressions), ինչու չէ՝ նրանց ձեռքով լուսանցքներում կամ բառերի, նախադասությունների ստորին կամ վերին հատվածներում արված նշումները, ուսումնասիրողների բնագրային մեկնություններն ու հավելագրությունները (անգլ.՝ other inscriptions added by previous owners or readers) (օրինակ՝ **ՄՄ Արք. Ձեռ. Հ^ա 296, պիպ. Բա, 297, էջ 1ա, 965, էջ 1ա**): Որոշ ձեռագրերի, հայերի, հայկական միջավայրում գործածության մասին են խոսում բնագրային բառերի, նախադասությունների կողքին արված՝ արդեն հայերեն նշումները, բառերի կամ բառակապակցությունների հայերեն

տառադարձումներն ու թարգմանությունները (օրինակ՝ **ՄՄ Արք. Ձեռ. Հ^Կ 646**) (նկ. 15):

Անփոփելով փաստենք, որ օսմաներեն ձեռագրերում կան նաև անանուն, անվարժ ձեռքով, հապճեպ, սիրողական, ուղղումներով, խմբագրված, լեզվին բավարար չափով չտիրապետող գրիչների, գրչագրության մեջ հնտանալու կամ պարզապես



Նկ. 15

շուկայի (վաճառքի) համար պատրաստված ձեռագիր օրինակներ:

Այդուհանդերձ, Մատենադարանի օսմաներեն ձեռագրերի տեխնիկական հատկություններին, հարդարանքին վերաբերող մեր այս անդրադարձը համեստ, առաջնաքայլ ուսումնասիրություն համարելով հանդերձ, տեսանելի է իսլամական՝ ի մասնավորի օսմանյան ձեռագրերի, կազմման, հարդարման ավանդույթների, նաև՝ միայն մեր ձեռագրերին բնորոշ առանձնահատկությունների ներկայությունը, որոնք արդեն պայմանավորված են գրչության, ձեռագրերի գործածության վայրերի հետ՝ Երևան, Էջմիածին, Շուշի և այլն:

Հետևաբար՝ օսմաներեն ձեռագրերը կարող են դառնալ օժանդակ, ինչու չէ՞ նաև առաջնային աղբյուր մասնագիտական բազմաշերտ ուսումնասիրությունների համար:

Անի Ժ. Ավետիսյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են օսմաներեն ձեռագրերը, օսմանյան աղբյուրների ուսումնասիրությունը, ձեռագրագիտությունը, միջնադարյան և ժամանակակից թուրքական գրականությունը, հայատառ թուրքերեն ձեռագիր աղբյուրները: Հեղինակ է 18 գիտական հոդվածների, մեկ կոլեկտիվ մենագրության, տարբեր աշխատությունների մեջ ընդգրկված թարգմանությունների և այլն:

Էլ. huugte`aniavet@matenadaran.am

PHYSICAL AND STYLISTIC FEATURES OF THE OTTOMAN TURKISH MANUSCRIPTS IN THE MATENADARAN COLLECTION

Ani J. Avetisyan

Key words - Matenadaran, Arabic script manuscript collection, Ottoman Turkish, Ottoman Turkish manuscripts, manuscript ornamentation, ornamental art, binding, watermark, calligraphy samples, scribe, colophon.

The article presents a detailed analysis of the physical forms and stylistic aspects of the Ottoman Turkish manuscripts in the Matenadaran Collection.

In the opening section of the article, the author briefly touches on the sources of the formation of the Ottoman Turkish manuscript collection housed in the Matenadaran, giving the general information on the time and the place of their creation, as well as an outline of their content.

The Ottoman Turkish manuscripts of the Matenadaran are formed by a combination of the collections of the Mother See of Holy Etchmiadzin, the Yerevan Literary Museum (now the Charents Museum of Literature and Art), the Lazarev Institute of Oriental Languages in Moscow, the V. I. Lenin Library in Minsk (now the National Library of Belarus), and individual donations.

The total number of the Ottoman Turkish manuscripts is 400, ranging from the 16th to the 20th century. The manuscripts are multi-content, predominantly comprising original texts with a focus on philology, religion, law, history, medicine, and natural sciences. The manuscripts were copied in various places, including Istanbul (Constantinople), Ankara, Bursa, Silistra, Etchmiadzin, Yerevan, Shushi, Tabriz, Moscow, Baku, and other places.

In the second part of the article, the author presents a series of examples of the skills employed in the external and internal design of Islamic manuscripts, with a particular focus on the Ottoman Turkish manuscripts. These examples encompass a range of elements, including paper, ink, binding, script, rules of writing colophons, as well as decoration (headpieces, miniatures, textual, marginal ornaments, etc.).

Finally, the author considers the role of the manuscripts in society, citing examples from the Ottoman Turkish manuscripts. The author demonstrates that the manuscripts were not merely ordinary copies; they were also utilized in various aspects of everyday life, including as research sources, applied materials, or

textbooks in the curriculum of education, as gifts, as items of purchase and sale, and as integral parts of inheritance, etc.

This study of the external and internal peculiarities of the Ottoman Turkish manuscripts of the Matenadaran collection is the first modest step in this sphere, however, it reveals the features that are typical of Islamic manuscripts, especially of the Ottoman Turkish manuscripts.

Резюме

ФИЗИЧЕСКИЕ ФОРМЫ И СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ОСМАНСКИХ РУКОПИСЕЙ В КОЛЛЕКЦИИ МАТЕНАДАРАНА

Ани Ж. Аветисян

Ключевые слова - Матенадаран, коллекция арабских рукописей, османский язык, османские рукописи, оформление рукописей, декоративное искусство, переплет, филигрань, образцы каллиграфии, писец, колофон.

В статье автор представляет общие физические формы и стилистические аспекты османских рукописей Матенадарана, источники формирования фонда османских рукописей, входящих в состав собрания арабографических рукописей Матенадарана, и общие сведения о времени, месте их написания и об их содержании.

Коллекция османских рукописей Матенадарана сформирована на основе коллекций Святого Эчмиадзина, Ереванского литературного музея (ныне Музей литературы и искусства имени Чаренца), Лазаревский институт восточных языков в Москве, Библиотека имени В. И. Ленина в Минске (ныне Национальная библиотека Беларуси) и индивидуальных пожертвованиях.

Общее количество османских рукописей составляет 400, датируемая с 16-го по 20-й век. Рукописи содержательные, включают оригинальные тексты по филологии, религии, праву, истории, медицине и естественным наукам. В качестве мест создания рукописей упоминаются Стамбул (Константинополь), Анкара, Бурса, Силистре, Москва, Эчмиадзин, Ереван, Шуши, Тебриз, Баку и другие.

Во второй части статьи описаны примеры применения навыков, используемых при внешнем и внутреннем декоративном оформлении исламских, в частности османских рукописей, к которым относится характеристика

бумаги, чернил, переплета, вид письма, правила составления колофона, а также декора (фронтальный декор, миниатюра, текстовые, маргинальные орнаменты).

В статье также упоминаются случаи использования рукописей, например, османских рукописей, в общественной жизни. В последней части статьи автор также упоминает примеры использования рукописей в обществе, приведя примеры из османских рукописей. Автор показывает, что рукописи, не только являются обычными копиями, но и использовались в повседневной жизни среди широкой публики в качестве исследовательских источников, прикладных материалов или учебников в учебных программах, подарков, предметов купли-продажи, составной части наследства и т. д.

Проведенный нами анализ внешних особенностей османских рукописей Матенадарана – первый скромный шаг в этом направлении, однако и он выявляет характерные особенности составления и декора исламских, в частности, османских рукописей.

Օգտագործված գրականություն

1. **Ավետիսյան Ա.**, «Մատենադարանի օսմաներեն ձեռագրերի հավաքածուն (Նկարագրման մեթոդաբանությունը)», «Էջմիածին», 2013, N Ը:
2. **Մատենադարանի Արաբատառ ձեռագրերի հավաքածուի օսմաներեն ձեռագրերը.** ՄՄ Արք. Ձեռ. Նւր 55, 59, 110, 137, 166, 196, 223, 228, 230, 245, 252, 296, 297, 299, 302, 312, 313, 321, 323, 324, 325, 334, 346, 362, 394, 412, 462, 465, 577, 633, 640, 646, 741, 937, 939, 965, 983, 985, 1038, 1041, 1096, 1166, 1148, 1166, 1221, 1234, 1281, 1283, 1284, 1439, 1456, 1749, 1803, 2059, 2211:
3. **Avetisyan A.**, "The Collection of Ottoman Turkish Manuscripts of the Matenadaran and the Description Methodology", The Countries and Peoples of the Near and Middle East, XXX, Yerevan, "GITUTYUN" Publ. House of the NAS RA, 2016, pp. 252-262.
4. **Déroche Fr., Berthier An.**, Islamic Codicology (An Introduction to the Study of Manuscripts in Arabic Script), Al-Furqan Islamic Heritage Foundation, London, 2005.
5. **Gacek A.**, Arabic Manuscripts. A Vademecum for Readers, Leiden. Brill, Boston, 2009.
6. **Гарбузова В. С.**, Поэты средневековой Турции, Ленинград, 1963.
7. **Клепиков С. А.** Штемпели (таблица), А) Штемпели на бумаге русского производства, <http://opentextnn.ru/old/history/arkheography/specification/index.html?id=2985>.
8. **Клепиков С. А.** Штемпели (таблица), Б) Наиболее часто встречающиеся в русских архивах штемпели на бумаге иностранного производства, <http://opentextnn.ru/old/history/arkheography/specification/index.html?id=2985>.
9. Рукописная и ксилографическая книга востока: Очерки кодикологии, (ред. Пелевин М. С.), Санкт-Петербург, 2015.
10. **Derman M. Uğur**, Osmanlı Hat Sanatı (Sakıp Sabancı Müzesi, Sabancı Üniversitesi, İstanbul), Deutsche Guggenheim, Berlin, 2001.

REFERENCES

1. **Avetisyan A.**, Matenadarani osmaneren dzeragreri havak'atsun (Nkaragrman met'odabanutyunë, Ėj., 2013, Ė, ėj; 79-85 (**In Armenian**).
2. **Matenadarani Arabatır dzeragreri havak'atsui osmaneren dzeragrere:** MM Arb. dzer. H^{mm} 55, 59, 110, 137, 166, 196, 223, 228, 230, 245, 252, 296, 297, 299, 302, 312, 313, 321, 323, 324, 325, 334, 346, 362, 394, 412, 462, 465, 577, 633, 640, 646, 741, 937, 939, 965, 983, 985, 1038, 1041, 1096, 1166, 1148, 1166, 1221, 1234, 1281, 1283, 1284, 1439, 1456, 1749, 1803, 2059, 2211(**In Ottoman Turkish**).
3. **Garbuzova V. S.**, Poety srednevekovoj Turcii, Leningrad, 1963 (**In Russian**).
4. **Klepkov S. A.**, Shtempeli (tablica), A) Shtempeli na bumage russkogo proizvodstva, <http://opentextnn.ru/old/history/arkheography/specification/index.html?id=2985> (**In Russian**).
5. **Klepkov S. A.**, Shtempeli (tablica), B) Naibolee chasto vstrechajush'ijesja v russkix arxivax shtempeli na bumage inostrannogo proizvodstva (**In Russian**).
<http://opentextnn.ru/old/history/arkheography/specification/index.html?id=2985> (**In Russian**).
6. Rukopisnaja i ksilograficheskaja kniga vostoka: Oчерki kodikologii, (red. Pelevin M. S.), Sankt-Peterburg, 2015, (ebook) (**In Russian**).
7. **Derman M. Uğur**, Osmanlı Hat Sanatı (Sakıp Sabancı Müzesi, Sabancı Üniversitesi, İstanbul), Deutsche Guggenheim, Berlin, 2001, (ebook) (**In Turkish**).